ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

25 ապրիլի 2024 թվականի N 146 - Ա

«ԿԱՊԱՆԻ ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱԴԻՐ ՄԱՐՄՆԻ՝ ՏՆՕՐԵՆԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿԱԶՄԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով, «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 11-րդ մասի 3-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2022թ. փետրվարի 3-ի «Առողջապահական պետական ոչ առևտրային կազմակերպությունների և հարյուր տոկոս՝ պետությանը սեփականության իրավունքով պատկանող բաժնեմաս ունեցող առողջապահական բաժնետիրական ընկերության գործադիր մարմնի ընտրության (նշանակման) մրցույթի օրինակելի կարգը և նրանց հետ կնքվող աշխատանքային պայմանագրերի օրինակելի ձևերը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի հուլիսի 7-ի N 992-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 129-Ն որոշմամբ հաստատված N1 հավելվածի 15-րդ կետով և հիմք ընդունելով ՀՀ առողջապահության նախարարության 2024 թվականի ապրիլի 23-ի N ՎԳ/05/12105-2024 գրությունը.

ո ր ո շ ու մ ե մ.

1.Հաստատել՝ «Կապանի բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության գործադիր մարմնի՝ տնօրենի ընտրության մրցութային հանձնաժողովի կազմը՝ համաձայն հավելվածի:

2. ՀՀ Սյունիքի մարզպետի աշխատակազմի գլխավոր քարտուղարին՝ ապահովել սույն որոշումից բխող անհրաժեշտ գործառույթների իրականացումը:

2024-04-25 10:53:01 GMT+4
Հաստատված է EKENG-ի կողմից

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ Ռ. ՂՈՒԿԱՍՅԱՆ

2024թ. ապրիլի 25
ք. Կապան

Հավելված
ՀՀ Սյունիքի մարզպետի
2024 թվականի ապրիլի 25-ի
N 146-Ա որոշման

ԿԱՋՄ

«Կապանի բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության գործադիր մարմնի՝ տնօրենի ընտրության մրցութային հանձնաժողովի.

1.	Նարե Ղազարյան	Մարզպետի տեղակալ (հանձնաժողովի նախագահ),
2.	Գայանե Սարգսյան	Մարզպետի աշխատակազմի անձնակազմի կառավարման, փաստաթղթաշրջանառության և հասարակայնության հետ կապերի վարչության փաստաթղթաշրջանառության բաժնի պետ (հանձնաժողովի քարտուղար),
3.	Նունե Գևորգյան	Մարզպետի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ոլորտի հարցերի վարչության պետ (համաձայնությամբ),
4.	Անահիտ Հովհաննիսյան	Մարզպետի աշխատակազմի անձնակազմի կառավարման, փաստաթղթաշրջանառության և հասարակայնության հետ կապերի վարչության անձնակազմի կառավարման բաժնի պետ (համաձայնությամբ),
5.	Անահիտ Մկրտչյան	Առողջապահության նախարարության դեղորայքային քաղաքականության և բժշկական տեխնոլոգիաների վարչության դեղորայքային քաղաքականության բաժնի պետ **(համաձայնությամբ),**
6.	Դավիթ Հովսեփյան	Առողջապահության նախարարության անձնակազմի կառավարման վարչության պետի պարտականությունները կատարող (համաձայնությամբ),
7.	Արմեն Առաքելյան	ԱՆ «Ավան» հոգեկան առողջության կենտրոն» ՓԲԸ-ի տնօրենի ընհանուր հարցերով տեղակալ (համաձայնությամբ):

2024-04-25 10:45:44 GMT+4
Հավաստված է ԷԿԵՆԳ-ի կողմից

ՀՀ Սյունիքի մարզպետի աշխատակազմի